ԿԱՐԾԻՔ

Դ. Ռ. Մոսինյանի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» ատենախոսության մասին՝ ներկայացված Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը վերաբերում է գիտության փիլիսոփայության թերևս ամենից բարդ ու վիճահարույց թեմաներից մեկին: Դա ցույց է տալիս համանման այլ գիտակարգերի հետ նրա նույնիսկ հպանցիկ համեմատությունը: Բավական է ասել, որ պատմությունը որպես ժամանակային անցյալ դուրս է հետազոտողի վերահսկողությունից և, ինչպես ատենախոսն է նշում, «ճանաչելի չէ փորձիմացությամբ»: Արտակարգ դժվար է իմացության այս ոլորտում սուբյեկտի բազմադեմ ներկայության (սուբյեկտիվ գործոնի) բացորոշումն ու հաղթահարումը: Ի տարբերություն բնագիտության՝ այստեղ ուսումնասիրության առարկան այն գործողություններն ու գործընթացներն են, որոնց իրագործողը գիտակցությամբ ու կամքով օժտված և որոշակի նպատակներ հետապնդող մարդն է: Դա պահանջում է օբյեկտիվության՝ գիտական հետազոտության հիմնարար այդ սկզբունքի, ավելի նրբին իմաստավորում: Հիշատակելի է նաև տերմինաբանական բնույթի մի հանգամանք, որ պատմության փիլիսոփայությանը մասին տեքստերում թյուրըմբռնումների տարածված պատճառ է: Դա այն է, որ նույն «պատմություն» բառով է սովորաբար նշանակվում մի կողմից՝ որևէ ժամանակաշրջանում իրապես կամ ենթադրաբար տեղի ունեցած և միմյանց հաջորդած եղելությունները, անցքերը, իրադարձությունները և մյուս կողմից՝ դրանց մասին գիտությունը: *Լեզու և լեզվաբանություն*, *տնտեսություն և տնտեսագիտություն*, *հասարակություն և հասարակագիտություն* և նման շատ օրինակներում առարկայական այն ոլորտը, որին ուղղված է հետազոտությունը և նրա մասին գիտությունը նշանակվում են տարբեր հասկացություններով: Պատմության դեպքում նույնպես կարելի է մտցնել հստակություն: Ատենախոսը տեսնում է դրա հնարավորությունը, երբ խնդիր է դնում «լուսաբանել մի կողմից՝ պատմության

և պատմագիտության փոխհարաբերությունները, մյուս կողմից՝ պատմության իրողութենական և գրութենական մակարդակների առանձնահատկությունները» (ատենախոսություն՝ էջ 11): Շարունակելով կամ գուցե լրացնելով այդ միտքը և մնալով ատենախոսի լեզվաոճական աշխարհում՝ երևի կարելի է արձանագրել պատմության իրողութենական և գրութենական իմաստների տարբերակման խնդիրը՝ առաջին պլան մղելով պատմության՝ որպես գիտության տարբերությունը այն երևույթներից, որոնց մասին ինքը հավակնում է լինել գիտություն: Դա կարող էր լինել, օրինակ, այդ նպատակով *պատմագիտություն* հասկացության այնպիսի ամրագրումը, որ բացառի հաճախ նկատվող շփոթը: Կարծում եմ՝ պատմության փիլիսոփայության խնդրահարույց հարցերի վերաբերյալ այս օրինակները (իսկ դրանք կարելի է դեռ շարունակել) բավական են ցույց են տալու համար այն դժվարությունները, որոնց իմացության այդ ոլորտում բախվում է ցանկացած մասնագետ: Պատահական չէ, որ պատմության փիլիսոփայության առանցքային բոլոր հարցերը մնում են բանավիճային՝ հաճախ համաձայնության ձեռքբերման հեռանկարի բացակայությամբ: Կարծում եմ՝ ատենախոսության վերաբերյալ սկզբունքային բնույթի հնարավոր բոլոր դիտարկումները պետք է կատարվեն այդ հանգամանքի հաշվառումով:

Ատենախոսությանն ունի «Պատմության փիլիսոփայական հայեցակերպերի մեթոդաբանական վերլուծություն» վերտառությունը: Վերնագիրը ենթադրում է հետազոտության ծավալման որոշակի սյուժե, ըստ որի, ինչպես հուշում վերնագիրը, աշխատանքում ինչ-որ հիմքով (դա կարող էր առաջարկված լինել և ատենախոսի կողմից) նախ պետք է առանձնացվեն պատմության փիլիսոփայության հայտնի հայցակարգերը և այնուհետև հերթով անցնել դրանց մեթոդաբանական վերլուծությանը՝ այդ կերպ հընթացս վեր հանելով դրանց ընդհանրություններն ու տարբերությունները: Սակայն ատենախոսն ընտրել է այլ մոտեցում: Նա ընտրել է որոշակի դիտանկյուններ, որտեղից նկարագրել և իմաստավորել է պատմության փիլիսոփայության՝ այդ դիտակետերից «երևացող» խնդիրները: Դրանց առաջադրումն և պատմության փիլիսոփայության խնդիրները այդ դիտանկյունների ընձեռած միջոցներով ու դրանց սահմաններում վերլուծելու հեղինակային մոտեցումը անկասկած մեթոդաբանական բնույթ ունի, և ատենախոսության հեղինակը բոլոր հիմքերն ունի

դա համարելու պաշտպանության ներկայացրած իր աշխատանքի գլխավոր գիտական նորույթը: Ընտրված դիտանկյուններից «երևացող» առավել սկզբունքային հարցերի ու հարցադրումների ամփոփ ներկայացումը մեկ դիտանկյան «գլխարկի տակ» ատենախոսը հարմար է գտել անվանել *հայեցակերպ*:

Աշխատանքում առաջադրվում են պատմության փիլիսոփայության հետևյալ հայեցակերպերը՝ գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և սոցիալ-փիլիսոփայական կամ քաղաքագիտական: Թեմայի ներքին միասնության տեսակետից այդ հայեցակերպերին տրվում է սկզբունքային նշանակություն: Բավական է ասել, որ գիտական նորույթների երկրորդ կետում ատենախոսը արձանագրում է, որ «պատմությանն առնչվող փիլիսոփայական խնդիրները հանգեցնելի են պատմության գոյաբանական, իմացաբանական տրամաբանական-բարոյագիտական և սոցիալ-փիլիսոփայական կամ քաղաքագիտական հայեցակերպերին» (ատենախոսություն էջ 12): Այդ դրույթը, ինչպես ասվեց, աշխատանքում նշվում է գիտական նորույթների շարքում: Դա անկասկած կարևոր գաղափար է, և լավ կլիներ, որ դրա հիմնավորմանը աշխատանքում մեծ տեղ տրվեր: Որպես աշխատանքի գլխավոր նորույթներից մեկը ներկայացվող այն եզրակացությանը, որ առաջադրված հայեցակերպերը սպառում են պատմությունը փիլիսոփայորեն մտածելու դիտանկյունները, կարելի է գալ վերլուծական լուրջ աշխատանքի արդյունքում: Հետազոտության մեթոդաբանությանը նվիրված մասում ատենախոսն ընդգծում է, որ այդ արդյունքին ինքը հասել է հետազոտության թեմայի համատեքստում համակարգային մեթոդի մասնավորեցված կիրառման շնորհիվ: «Համակարգային մեթոդը, - նշում է նա, - այս համատեքստում նշանակում է, որ հաշվի են առնված փիլիսոփայական գիտակարգերը և դրանց դիտանկյունից վերհանված են պատմության հնարավոր բոլոր հայեցակերպերը» (ատենախոսություն էջ 12): Փիլիսոփայական գիտակարգերի դիտակետից մեթոդաբանական հայեցակերպերի «ստացումը» ինքնին ստեղծագործական լուրջ ճիգեր է պահանջում և կարող էր դառնալ ինքնուրույն աշխատանքի թեմա: Ես հատուկ օգտագործեցի «ստացում» բառը՝ ակնարկելու համար, որ այդ հայեցակերպերի վերջավոր լինելու հանգամանքը (ըստ հեղինակի դրանք չորսն են) տրված չեն, եթե կարելի է ասել, փիլիսոփայական

գիտակարգերի մակերեսին: Ատենախոսի «հաշվի են առնված» արտահայտությունը նշանակում է, որ այդ գործն արված է, որ այդ բոլոր հայեցակերպերը, ինչպես ինքն է նշում, իր կողմից վերհանված են հատուկ վերլուծությամբ, սակայն ըստ երևույթին աշխատանքը չծանրաբեռնելու համար նպատակահարմար չի գտնվել ծանրանալ դրանց վրա: Եթե դա իրոք արված է, ապա նկատի ունենալով հարցի կարևորությունը և մանավանդ այն, որ գաղափարը ներկայացվում է աշխատանքի գիտական նորույթների շարքում, ատենախոսը չպետք է սահմանափակվեր այդ վերլուծությունը արված լինելու սոսկ հավաստումով: Ինքը նյութը պահանջում է առաջադրված գաղափարին կատարված հանգամանալից անդրադարձ: Հնարավոր է, որ հեղինակը այդ եզրակացությանը հանգել է ողջախոհության սահմաններում և համարել այն ինքնին ակնհայտ մի բան: Բայց այդ դեպքում այն չի գնահատվի որպես գիտական հիմնավորմամբ ստացված նորույթ: Ինքս հակված եմ մտածելու, որ ատենախոսի կողմից առաջադրված պատմության փիլիսոփայության հայեցակերպերի գաղափարը հիմնարար մեթոդաբանական վարկած է, և ատենախոսը կարող էր այն ներկայացնել որպես այդպիսին: Ի դեպ դա չէր արժեզրկի ո՛չ բուն գաղափարը, ո՛չ նրա հիմքով որոշակի հայեցակերպերի առաջադրումը, ո՛չ էլ նրա հիշատակումը գիտական նորույթների շարքում: Դա թույլատրվում է գիտական պրակտիկայում և չի հակասում գիտականության չափանիշներին: Հետազոտական նոր խնդիրներ լուծելու ժամանակ սովորաբար առաջադրվում է գիտական վարկած, փորձում ստուգվում նրանից բխող հետևությունները, և եթե արդյունքները գոհացուցիչ են, չի բացառվում, որ այն ստանա տեսության հիմնարար սկզբունքի կամ օրենքի կարգավիճակ: Դա հետազոտական գործընթացի առօրեական երևույթ է:

Քանի որ խոսում ենք գիտական նորույթի մասին, նշել է պետք, որ ատենախոսը չի գնացել դրանց շարադրման, պայմանականորեն ասած, ավանդական ճանապարհով, որոնք սովորաբար սկսվում են «ատենախոսության մեջ հիմնավորվում է...», «աշխատության մեջ առաջին անգամ ցույց է տրվում», «... առաջին անգամ ապացուցվում է...» և նման այլ բառակապակցություններով: Ատենախոսն իր ստացած գիտական նորույթների մասին հաղորդում է առանց դրանց նորույթային որակումների: Նորույթների շարքի 3-րդ կետով, օրինակ, նա

հայտնում է, որ «Պատմության փիլիսոփայության ոլորտի միասնականությունը հնարավոր է որպես պատմության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական-բարոյագիտական և քաղաքագիտական հայեցակերպերի դիրքերից իրականացվող երկխոսություն» (ատենախոսություն էջ 12): Համոզված եմ, ընթերցողների մեծ մասը դրանում կտեսնի ոչ թե գիտական նորույթ, այլ ինքնին հասկանալի պնդում: Նորույթի արձանագրության ավանդական ձևը ավելի շահեկան կլիներ, քանի որ հստակ ակնարկ կպարունակեր պատմության փիլիսոփայության բանավիճային բնույթի և իր տեսակետի հավակնությանը՝ ներքին միասնություն ունեցող իր նախագծի դիրքերից վերըմբռնել ոլորտի իմացական դաշտը:

Ուսումնասիրության մեջ առաջադրված հայեցակերպերի գիտական կենսունակությունը կախված է այն բանից, թե դրանք պատմության փիլիսոփայության ոլորտի գիտակարգերում ի՞նչ խնդիրների ու հարցերի են տալիս նորիմաստ պատասխաններ կամ բնագավառի համար պատասխան չստացած ի՞նչ նոր կարևոր հարցադրումներ են ձևակերպվում: Դրանք պատմության փիլիսոփայական վերլուծության մեջ հայեցակերպերի աշխատունակության ու «կիրառման» արդյունավետության, հետևաբար նորույթներ արգասաբերելու ապացույցներ կարող էին լինել, որոնց մասին անշրջանցելի է «ատենախոսության մեջ հիմնավորվում է...» կամ «ատենախոսության մեջ ապացուցվում է..« ձևակերպումները: Աշխատանքում նման դրվագներ կան: Որպես օրինակ կարող ենք մեջբերել առաջին գլխի «Պատմության ենթական» ենթագլխի այն հատվածը, որում ասվում է. Քննական վերլուծության ենթարկելով պատմափիլիսոփայական մշակույթում առաջադրված պատմության տարբեր ենթակաների հնարավորությունները՝ մարդ, ոգի, քաղաքակրթություն, հասարակություն և այլն, ատենախոսի կողմից «առաջ է քաշվում այն դրույթը, որ այդ ենթական չկա պատրաստի վիճակում, այլ իր լինելության համար ենթադրում է մտավոր ճիգ և համապատասխան լեզվագիտակցույթուն» (ատենախոսություն էջ 27): Նույն գլխի «Նախապատմություն և պատմություն» ենթագլխում հետևյալ հատվածում կարդում ենք. «Հիմնավորվում է այն դրույթը, որ պատմությունը գոյ(աբան)ական ինքնություն է ձեռք բերում, երբ տեղակայվում է այնպիսի համակարգում, որն ամենայն ճանաչողություն ենթարկում է պատմականության

սկզբունքին, պատմագրությունը դարձնում է գիտելիքի լինելիության հիմնական ձևը» (ատենախոսություն էջ 34):

Նման ձևակերպումները, իմ կարծիքով, պետք է առանձնացվեին նորույթների մասում, մանավանդ որ աշխատանքի այդ բաժնում թվարկված նորույթները ըստ էության պատմության փիլիսոփայության հայեցակերպերի մասին հիմնական դրույթի իմաստային ու գործառույթային տարբեր կողմերն են արձանագրում և մի տեսակ նույն բանի մասին են:

Ես չեմ տեսնում ատենախոսությունը ըստ գլուխների քննելու անհրաժեշտությունը: Ատենախոսը, ինչպես ասվեց, առաջադրում է պատմության փիլիսոփայական քննության գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական կամ բարոյագիտական և սցիալ-փիլիսոփայական կամ քաղաքագիտական իրենց բնույթով տարբեր դիտանկյուններ և դրանցից բացվող «տեսադաշտերում» առանձնացնում ու քննարկում է իր տեսակետից ամենից առանցքային (և իհարկե բանավիճային) հարցերը: Ես կանխատեսում եմ, որ այդ մոտեցման շուրջ հնարավոր վեճերը ծավալվելու են հեղինակի այն պնդման շուրջ, որ պատմության փիլիսոփայության մեջ առկա բոլոր հարցերը հանգեցնելի են դրանց: Եվ եթե նույնիսկ հեղինակին հաջողվի դա հիմնավորել, ապա դրան կհաջորդի մեկ այլ սկզբունքային հարց այն մասին, թե ինչ առավելություն ունի առաջարկվող մեթոդը պատմության փիլիսոփայության հարցերի դասակարգման ու համակարգման այն ավանդական մոտեցման նկատմամբ, որը այդ հարցերը դիտարկում է այնտեղ, որտեղ դրանք ծնվել են՝ պատմության փիլիսոփայության մեզ հայտնի հայեցակարգերում՝ Ջամբատիստա Վիկոյի պատմության շրջապտույտի տեսության, Առնոլդ Թոյնբիի լոկալ քաղաքակրթությունների տեսության, Մարքսի ֆորմացիաների հերթագայության տեսության մեջ և այլն: Ատենախոսը դրան կարող է հակադարձել, թե իրեն հաջողվել է պատմության փիլիսոփայության միմյանցից տարբեր բազմաթիվ հայեցակարգերի բովանդակությունը փնջել ու տեղավորել իր կողմից առաջարկված չորս «փաթեթներում»: Ենթադրյալ ընդիմախոսը կհամառի՝ նկատելով, որ այդ մոտեցմամբ դիտարկվող հարցերը կորցնում են իրենց ծագման իրական պատմությունը, կարելի է ասել՝ իրենց կենսագրությունը և հատվածական են դարձնում

նման աշխատանքը: Արձագանքելով այդ դիտարկմանը, ատենախոսը կհակադարձի դրան պնդմամբ, որ իր մոտեցումը թույլ է տալիս պատմության փիլիսոփայության առկա և հնարավոր հայեցակարգերը միմյանց հետ համեմատել իրենց գոյաբանական, իմացաբանական, տրամաբանական ու քաղաքական չափումներում, որ համակարգված ձևով չի արվել մինչ այժմ: Այդ բանավեճը ավարտ չէր ունենա, և այն կարելի է ընդհատել այն դիտողությամբ, որ պատմության փիլիսոփայությունը որպես գիտակարգ գտնվում է կայացման փուլում և ընդդիմախոսի նկատառումները կարող են վերաբերել այդ բնագավառում իրացված բոլոր նախագծերին, բոլոր հայեցակարգերին: Բայց դա չի նշանակում, որ այս կամ այն հայեցակերպի «իրավասությանը հանձնված» կոնկրետ խնդիների հեղինակային մեկնաբանությունները անառարկելի լինելու չափ համոզիչ են: Օրինակ՝ *Պատմության գոյաբանական հայեցակերպը* գլխի երկրորդ *Նախապատմություն և պատմություն* վերնագիրը կրող ենթագլխում որոշ դրույթներ դժվար համատեղելի են: «Նախապատմությունը, որ ըստ սահմանման, պիտի նախորդեր պատմությանը, մտածելի է դառնում միայն պատմությամբ, որովհետև գոյաբանորեն ածանցյալ է» (ատենախոսություն էջ 31): Եվ հետո՝ «Նախապատմությունը հադես է գալիս որպես յուրօրինակ «ինքնին իր», որը հնարավոր չէ ճանաչել, բայց որի գոյությունը, առնվազն մեթոդաբանական առումով, կասկածից վեր է: Արտաքին դիտարկմամբ՝ խնդիրը համեմատաբար պարզ է, գրի և պատմական գիտակցության շնորհիվ նախապատմական շրջանը շարունակում է պատմությունը: Սակայն ավելի կարևոր է հարցի ներքին հատույթը, այն է՝ ինչ է տեղի ունեցել նախապատմության մեջ, որ գոյաբաներեն հնարավոր է դարձրել պատմությունը» (ատենախոսություն էջ 32): Առաջին մեջբերման մեջ պնդումն այն մասին, որ նախապատմությունը «մտածելի է դառնում միայն պատմությամբ, որովհետև գոյաբանորեն ածանցյալ է նրանից» և երկրորդ մեջբերման մեջ առաջադրվող հարցը՝ «ի՞նչ է տեղի ունեցել նախապատմության մեջ, որ գոյաբանորեն հնարավոր է դարձրել պատմությունը» անհամատեղելի են: Նույն նախապատմության վերաբերյալ պնդվում է, որ այն գոյաբանորեն ածանցյալ է պատմությունից և այդ իմաստով պատմության շարունակությունն է, և այնհետև պնդվում է, որ նա է գոյաբանորեն հնարավոր դարձնում պատմությունը: Այդ կապակցությամբ արտաքին և ներքին դիտարկումների տարբերակումը պարզու-

թյուն չի մտցնում տեքստում, մանավանդ որ *գոյաբանություն* և *նախապատմություն* եզրույթները օգտագործվում են իրենց ֆիքսված իմաստներով: Այստեղ ամենայն հավանականությամբ պահանջվում են հավելյալ բացատրություններ:

Մեկ այլ դիտարկում: Պատմագիտական հետազոտություններում որևէ շրջանի պատմության և նրա նախապատմության մասին լայնորեն տարածված ըմբռնումները հազիվ թե թույլ տան նախապատմությունը որակել որպես, ինչպես ատենախոսն է բնութագրում, յուրօրինակ «ինքնին իր»: Ընդունված այդ պատկերացումների շրջանակում պատմաշրջանների առանձնացումը և նրանց միջև սահմանագծի անցկացումը որոշվում է դեպքերի իրողութենական հատույթում տեղի ունեցած կտրուկ անցումով, երբ *նախապատմություն* որակվող պատմաշրջանում տեղի ունեցած փոփոխությունները փոխում են պատմության ծավալման քաղաքական, քաղաքակրթական համատեքստը: Բնավ պարտադիր չէ, որ որպես նախապատմություն առանձնացվող այդ փուլը պատմագետի համար մնա «ինքնին իր»: Ես խոսում եմ հասկացության ընդունված կիրառության մասին, և դրա օրինակները շատ են: Մեզ համար ամենից ծանոթ դեպքը Ադրբեջան-Արցախ հակամարտությունն է, որի սկիզբը համարվում է 1918 թվականը, երբ Ռուսական կայսրության անկումից հետո թուրքական բանակը ներխուժել է Անդրկովկաս և հիմնել «Ադրբեջան» անունով կազմավորում: Դեպքը պատահաբար չի տեղի ունեցել: Դրան հաջորդող պատմությունը անկասկած ունի նախապատմություն, որ սկսվում է 1828 թվականից, երբ իր տիրապետության տակ անցած Անդրկովկասում Ռուսական կայսրությունը տարել է տարածաշրջանի իրանազերծման քաղաքականություն և ձևավորել *կովկասյան թաթարներ* անվամբ կեղծ էթնոհամայնքը և օժտել նրան ամենատարբեր արտոնություններով: 1828-1918 թթ. շրջանը ընդունված է դիտել որպես Ադրբեջան-Արցախ հակամարտության պատմության նախապատմություն և այդ ժամանակահատվածը պատմագետների հայտնի է իր գրեթե բոլոր մանրամասնություններով: Պատճառահետևանքային կապերը, որոնք միավորում են հակամարտության նախապատմությունը նրա պատմության հետ թույլ են տալիս բացատրելի դարձնել 1918-ին հաջորդած դեպքերը և հակամարտության պատմությունը դիտարկել որպես նրա պատմության շարունակություն: Դա իհարկե չի բացառում, որ նախապատմությանը

հաջորդած դեպքերը նոր լույս սփռեն նախապատմության վրա՝ չփոխելով նրա բովանդակության գլխավոր փաստերը:

Ակնհայտ է, որ նախապատմության և պատմության սահմանագիծը նշվում է իրադարձային երևույթով կամ դեպքով: Այդ կապակցությամբ ցանկալի կլիներ, որ ատենախոսն իր ուսումնասիրության մեջ ավելի լայն տեղ հատկացներ թեմայի տեսակետից առանցքային *պատմական փաստ* և *պատմական իրադարձություն* հասկացություններին, որը, կարծում եմ, ավելի ամբողջական կդարձներ աշխատանքի հասկացութային գործիքակազմը՝ մանավանդ գոյաբանական հայեցակերպի մասով: Այդ կապալցությամբ մի դիտարկում ևս:

Ընդհանրապես գոյաբանական մոտեցումը ենթադրում է քննարկվող գործընթացների կամ համակարգերի հետազոտության ժամանակ որոնել ու գտնել նրանց կայության/ներկայության խորքային, սահմանային հիմքերը, որոնք այս կամ այն կերպ բացատրություն են տալիս այդ գործընթացների մակերեսին «երևացող» և փորձում արձանագրվող երևույթներին, որ ածանցված են այդ հիմքերից (կամ հիմքից): Անտիկ շրջանից մեզ հասած ատոմիզմի տեսությունը դրա լավագույն օրինակն է: Հասարակությունը գերբարդ էություն է և որևէ մեկ հիմքից նրա դրսևորումների ողջ բազմազանության բացատրությունը, ինչպես ցույց է տվել հասարակագիտության պատմությունը, հնարավոր չէ: Այստեղից էլ հասարակության և նրա պատմության վերաբերյալ բազմաթիվ տեսությունների ու ուսմունքների առկայությունը: Հասարակության՝ որպես ընդհանրական համակարգի/գոյացության դեպքում ևս հանրավոր են նրա գոյաբանական քննության տարբեր դիտանկյուններ: Կարելի գոյաբանական հիմքեր որոնել հասարակական հարաբերությունների համակարգում: Կարելի է նույն խնդրին հետամուտ լինել պատմության սուբյեկտի/ենթակայի որոնումներում: Կարելի է դրանք որոնել համակարգաստեղծ երևույթների դաշտում: Ինքս համոզված եմ, որ որպես համակարգաստեղծ գործոն նման գոյաբանական դերակատարություն ունի սոցիալական ուժը: Ընդգծելով այդ հանգամանքը, կարծում եմ, որ գոյաբանական մոտեցմանը հատուկ մեթոդաբանական կարևորագույն նշանակության այդ գաղափարը որպես տանող թել տեղ պիտի գտներ

հեղինակային այն վերլուծություններում, որ կատարված են աշխատանքի *Պատմության գոյաբանական հայեցակերպերը* գլխում:

Թվարկված և գուցե հնարավոր այլ դիտարկումները սկզբունքորեն չեն կարող բացասաբար անդրադառնալ հեղինակային գլխավոր մտահղացման, նրա նորարական բնույթի վրա: Կարծում եմ, որ նոր մոտեցման շրջանակում ոչ միայն ինքը հեղինակը, այլև ուրիշ հետազոտողներ կծավալեն հետազոտական նոր աշխատանքներ: Գտնում եմ, որ ատենախոսությունը համապատասխանում է սահմանված բոլոր պահանջներին, և ատենախոսն արժանի է իր կողմից հայցվող փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին:

Ալեքսանդր Մանասյան

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Մանասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Հովհաննիսյան

22.10.2024 թ.